

Սեդա Գալստյան

Հայաստանի պատմության թանգարան
sedagalstyan@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՅՎՈՂ ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵԽԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ*

Հիմնադրանք. Թանգարանային հավաքածու, Գարեգին Նժդեհ, Վլադիմիրի բանտ, նամակներ, Բուլղարիա, Բալկանյան պատերազմ, Վիդկա Նիքոլովա:

«Խղճմանաբէս գատ ես ճանաչում եմ երկու գերագոյն դատաւորներ ևս – Աստուած և ժողովուրդ: Առաջինի դէմ գուցէ և մեղանչել եմ, իսկ երկրորդի դէմ՝ երբեք»:

Իր ժողովրդի դէմ երբեք չմեղանչած հերոսը տալիս է նաև ժողովրդի բնութագիրը հետևյալ հղումով՝ «Ժողովուրդներն այն են, անլի ճիշտը դատում են այն, ինչպիսին որ համարում են իրենց մտատրականութեան կողմից» (Նժդեհ 2001, 129): Կարծում եմ այս միտքն էլ խորհելու առիթ է տալիս մեզ՝ մտավորականներին...:

Այս մեծանուն հայորդու անվան հետ կապված է հերոսական և ողբերգական էջեր, միահյուսված իրար հետ, որի արդար գնահատականը դեռ կտա պատմությունը՝ իր արժանի տեղը հատկացնելով համամարդկային մեծերի շարքում: Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ) պահվող Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան, 1886–1955) հավաքածուն իր մեջ որոշ չափով պարունակում է հենց այս էջերի լուսաբանումը: Առաջին անգամ ՀՊԹ-ն 1996 թ. Գ. Նժդեհի եղբայր Լևոնի թոռ՝ Վազգեն Տեր-Հարությունյանից ձեռք բերեց մեր հերոսի՝ Վլադիմիրի բանտում թողած վերջին մասունքները: Այսօրվա պես հիշում եմ նրա զարմիկի՝ Վազգենի խոսքերը, երբ այս մասունքները (որոնք ի պահ են տրվել ՀՊԹ-ին) բերում էինք թանգարան, ասաց . «Մեր տանը ընդունված չէր Նժդեհի մասին բարձրաձայն խոսելը, որովհետև մեր հարազատները շատ զրկանքներ են կրել, պապիս ընտանիքը աքսորվել է Սիբիր՝ Կրասնոյարսկի երկրամաս...»: Այս հավաքածուի մեջ տեղ են գտել մեծ Զորավարի անձնական իրերը, որը կրել է բանտում՝ կոստյումը, վերարկուն, անձրևանոցը, Բուլղարիայում՝ Բալկանյան պատերազմում ստացած կրծքանշանները, այստեղ են սասունցիների նվերը՝ մետաքսե թելերով գործած բաճկոնակը, ձիու թամբի ծածկոցը՝ ասեղնագործված գունավոր մետաքսե թելերով, գրպանի ժամացույցը, նամակներ հարազատներին, եղբորը՝ իր գրական ժառանգությունը փրկելու կապակցությամբ, եղբոր աղջիկներին՝ Ամալյային, Օլյային և այլն, ՀՀ գլխավոր դատախազի որոշումը՝ Գ. Նժդեհի ռեաբիլիտացիայի մասին, 1992 թ.: Կարևոր մի փաստաթուղթ՝ մահվան վկայականը

* Ստացվել է 15. 07. 2022 թ., ընդունվել է տպագրության 18. 11. 2022 թ.:

1955 թ. դեկտեմբերի 21, ինչն օգնեց ուղղումներ անել մի շարք տեղերում՝ ընդհուպ «Հայկական հարց» հանրագիտարանում մահվան փաստի կապակցությամբ, մինչ այդ շատ տեղերում արձանագրված էր. 01 հունվար 1956 թ.: Փաստաթուղթն օգնեց ուղղումներ անել և վերջնական ճշտել Զորավարի մահվան տվյալները: Հավաքածուի մեջ է պարգևաթերթը՝ կապիտան Նժդեհին գնդապետի կոչում տալու մասին՝ 02.14.1920 փաստաթուղթը:

Կան բազմաթիվ նամակներ, որոնց բովանդակությունը լույս է սփռում մեր հերոսի կյանքի վերջին իրադարձությունների վրա: Կարևորում ենք հատկապես մի ձեռագիր, որը վերնագրված է «Հրանդիս պլեոնում», այն Նժդեհին իր եղբորը՝ Լևոնին է հանձնել Տաշքենդում տեսակցության ժամանակ: «Ձեռագրի մասին իմացել են միայն հոր և պապի մահից հետո, այն կոչ է ողջ ժողովրդին, հատկապես երիտասարդությանը: Ճամպուրկը մատուցներով միշտ թաքցրել են երեխաներից» (Վազգենի՝ զարմիկի պատմածը): Երբ առաջին անգամ ՀՊԹ-ում ցուցադրվեց թանգարանին ի պահ տրված նժդեհյան մատուցները, որի մեջ «Հրանդիս պլեոնում» անձնավկայությունն էր, սրահի հսկիչը պատմում է, որ երիտասարդ սերունդը հատուկ ուշադրություն էր դարձնում անձնավկայության յուրաքանչյուր տողին, իսկ մի աշակերտ, ով ամեն օր գալիս և կանգնում էր համապատասխան ցուցափեղկի մոտ և անգիր անում այդ տողերը, վերջին օրը խնդրել է իրեն ստուգել՝ անսխալ է արտասանում, թե՛ ոչ: Այս դրվագը շատ խոսուն է, թե ինչ հետք է թողել նժդեհյան շունչը երիտասարդ սերնդի աշխարհայացքի ձևավորման, հայրենիքի վաղվա օրվա, ապագայի տեսլականի, ինքնուրույն քաղաքական մտքի ձևավորման վրա, ովքեր երդվել են շարժվել այս պատգամներով:

Կարևորում ենք այն բնօրինակ լուսանկարները, որ հանձնվել են թանգարանին: Դրանց մեջ Ադյուստանի մայրը՝ Տիրուհի-Խաթայի Գյուլնազարյանը լուսանկարված է թոռան՝ Օլյայի հետ, մեկ այլ լուսանկարում՝ ազգականի՝ Հարությունով Վլադիմիրի հետ: Ըստ եղբոր թոռան՝ Վազգեն Հարությունյանի, Նժդեհի մայրը՝ Տիրուհին ապրել է ավագ որդու՝ Լևոնի ընտանիքի հետ: Սակայն համայնավարական հալածանքների ժամանակ Լևոնի ընտանիքը մոր հետ Արմավիրից արտրվում է Սիբիր՝ Կրասնոյարսկի երկրամաս: 3 տարի հետո վերադառնում են Վլադիկավկազ (Օրջոնիկիձե): Հետագայում ստիպված են լինում ապրել Ախալցխայում (այստեղ ծնվել է Վազգենը), Թիֆլիսում, իսկ Ստալինի մահից հետո թույլատրվում է վերադառնալ Հայաստան: «1937 թ. աշնանը Լևոնի ավագ դուստրը՝ Օլյան Հայաստանից գալիս է Վլադիկավկազ և տատին հյուր տանում Դիլիջան, մի քանի ամիս անց Տիրուհու առողջությունը խիստ վատանում է, և 1938 թ. փետրվարի 21-ին նա վախճանվում է» (Վարդանյան 2001, 8), թաղված է Դիլիջանի քաղաքային գերեզմանատանը:

Հավաքածուի մեջ է նաև եղբոր՝ Լևոնի բնօրինակ նկարը, ում բնակարանում (Թումանյան 16 հասցեում) ճամպուրկի մեջ պահվում էր այս հավաքածուն: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ձեռագիր նամակները՝ եղբորը, նրա դուստրերին՝ Ամալյային, Օլյային և ուրիշներին: Չկա որևէ նամակ, որն ավարտված չլինի հայրենիքի, Արարատի շունչը զգալու կարոտով: Մի վայրկյան իսկ չի ընդհատվել իր ժողովրդի սրտի զարկը զգալու բարբախյունը: Անընդհատ նրա

միտքը աշխատում էր նոր ծրագրերի ուղղությամբ, իր ժողովրդին օգտակար լինելու զգացումով:

Բանտից գրված մի նամակում նա նշում է իր հիվանդությունների մասին. նորից գլուխ է բարձրացրել տուբերկուլյոզը, գիշերները ջերմում է, հիպերտոնիկ է, լյարդը մեծացած է, և անհանգստացած է, որ իր տարիքում և իր ապրած պայմաններում ամեն պահ այս ամենը կարող է վտանգ ներկայացնել կյանքին: Բայց այս ամենի կողքին ավելացնում է, որ դեռ կարող է օգտակար լինել իր ժողովրդին: «Հնարավոր է, որ պետք չեմ կոմունիստներին, Հայաստանին, սակայն պետք եմ նրա միլիոնավոր սփյուռքահայությանը, արևմուտքում ազգապահպան գործի ծանր պայքարում, այդ պատճառով իմ մահը, որ կարող է ուրախացնել մեր ժողովրդի թշնամիներին, չի կարող չվրդովեցնել սփյուռքահայությանը, որին ես նվիրել եմ իմ գիտակից կյանքը»: Համբուրում եմ՝ Ձեր Գարեգին»: (նամակը ռուսերեն է. ՀՊԹ, ՆԳՊՖ, 1996 ի պահ):

Այս խոսքերի վառ վկայությունն է Գ.Նժդեհի մասին պատմող նյութերի 2-րդ հավաքածուն՝ Բուլղարիայում ծավալած գործունեության մասին: Դեռևս 1921թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Գ.Նժդեհը հուլիսին անցել է Պարսկաստան, որից հետո Բուլղարիա. «1922–1944թթ. բնակուել է Բուլղարիայում (Սոֆիա) զբաղուել քաղաքական, հասարակական և ազգային գործունեությամբ, եղել է Հ.Յ.Դ. Բալկանյան կոմիտեի անդամ, 1932թ. մասնակցել կուսակցության 12-րդ ընդհանուր ժողովին, ուր առաջարկում է հիմնել երիտասարդական կազմակերպություն» (Համբարձումեան 2003, 21):

2001թ. նոյեմբերի 28-ին Հայաստանի պատմության պետական թանգարանը, Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի հետ միասին բացեցին Գ.Նժդեհի ծննդյան 115-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որտեղ Նախիջևան հայրենակցական միության նախագահ Ռ.Համբարձումյանը թանգարանին նվիրեց որոշ նյութեր՝ բացիկներ, լուսանկարներ, հրավիրատոմսեր (օժանդակ ֆոնդի) կապված Նժդեհի կյանքի և գործունեության հետ: Կարծում եմ՝ այսօր ավելի շատ խոսվել և գրվել է Գ.Նժդեհի հայազգի ռազմական ու պետական գործիչ, Զանգեզուրի և Գողթանի ինքնապաշտպանության ղեկավար, Լեռնահայաստանի առաջնորդի մասին, սակայն ավելի քիչ է խոսվել և սակավ տեղեկություններ կան պահպանված նրա կյանքի և կենսագրության հաջորդ փուլի՝ հատկապես Բուլղարիայում ապրած տարիների մասին: Նյութերի ուսումնասիրությունը նորովի է մեկնաբանում մեր հերոսի կյանքի մի հատվածը: «Լեռնահայաստանէն ակամայ և արիւնոտ սրտով հեռանալով, ուրիշ բազմութիւններու նման Նժդեհ կը մնայ Թարիզ, ուր կենթարկվի բոլշևիկներու հետապնդումին, ըստ այդ շրջանին հոն ապրողներս վկայութեան: Նժդեհ շուրջ չորս ամիս պահուած կ'ապրի Թավրիզ, ապա կ'անցնի Եգիպտոս, ուրկէ կ'երթա Պուլկարիա և հոն ալ կը հաստատուի: Գ.Նժդեհ լայն ժողովրդականութիւն կը վայելէ պուլկարահայ գաղութին մէջ, ինչպէս նաև համակրանք՝ պետական շրջանակներու և մակեդոնական յեղափոխական ղեկավարներու մօտ, որոնց հետ յաճախ կը տեսակցի հայկական հարցերու կապակցութեամբ» (Աւօ 1968, 229):

Մի քիչ մանրամասնենք գորավարի կյանքին և գործունեությանը վերաբերող 2-րդ հավաքածուի մասին, որը 2009 թ. սեպտեմբերին ՀՊԹ-ն ստացել է Հայաստանի Հանրապետության կառավարությունից: Այն իր մեջ ամփոփում է 16 միավոր նյութ, որոնց մեջ առկա են 73 փաստաթղթեր և լուսանկարներ: Այդ փաստաթղթերը հիմնականում ներառում են Գ. Նժդեհի կենսագրականի ոչ շատ հայտնի էջերը, լույս սփռում հերոսի կյանքի որոշ դրվագների վրա: Հատկապես կարևորում ենք Բուլղարիայի ճանաչված բանաստեղծների, գրողների, հասարակական և քաղաքական գործիչների ու Գ. Նժդեհի միջև նամակագրական կապը, Գ. Նժդեհի նամակները, գրությունները, հիշողություններ, լուսանկարներ, «Ռազմիկ» ցեղակրոն թերթի համարներից: «Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպությունը՝ ի դեմս Գ. Նժդեհի, Հ. Ասատրյանի (սույնպես Հ.Յ.Գ.-ից հեռացված), Ն. Ասովաձատրյանի, որոնք 1937-ից Սոֆիայում հրատարակում էին «Ռազմիկ» ցեղակրոն թերթը, (Լալայան 1995, 52) հրապարակախոսական գործեր և այլն:

Փորձենք մանրամասնել, վերլուծել որոշ փաստաթղթեր: Հավաքածուում է նաև Գ. Նժդեհի հետ ժամանակին համագործակցած բեռլինաբնակ Ալֆրեդ Մուրադյանի հուշերը նրա մասին՝ գերմաներեն լեզվով, ձեռագիր, 5 էջ, որին կից կա նաև նյութի մեքենագիր տարբերակը: Այն իրենից ներկայացնում է տեղեկատվություն Գ. Նժդեհի մասին, որը գերմանական իշխանությունների խնդրանքով գրել է Բեռլինում 1942 թ. ստեղծված Հայոց Ազգային խորհրդի անդամ Ա. Մուրադյանը 1950-ական թթ. վերջին (Համբարձումեան 2001, 39): Փաստաթուղթը ուղարկվել է Զարե Մուրադեան-Դավթյանի միջոցով, ով տեղեկացրել է, որ հայրը ձեռագիրը պատրաստել է մի գերմանացու համար, ծանոթացնելու Նժդեհի կյանքի ու գործունեության հետևյալ փուլերին. ա) որպես զինվորական, բ) արտասահմանում ապրած տարիները և գ) որպես բանտարկյալ (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9040, 3):

Այս ամենը 2001 թ. Սոֆիայի համալսարանի բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Նիկոլյանի կողմից, ով դեռևս 1993 թ. հեղինակել էր «Ոգու բանաստեղծը, սրի ասպետը» գիրքը, հանձնում է Սոֆիայում ՀՀ դեսպանատան հյուպատոս Արթուր Մադոյանին: Գրքի առաջին օրինակի վրա Վ. Նիկոլյան գրել է. «Աստուած պահե՛ լաւ մարդոց»: Այն նվիրված է բուլղարացի բանաստեղծ Թեոդոր Տրայանովին (1882–1945)՝ ծնված Բազարչիկում, ով փիլիսոփա էր, սիմվոլիստ, ուսուցիչ ու դիվանագետ, և հայտնի հեղափոխական գործիչ Գ. Նժդեհի կյանքին ու գործունեությանը և նրանց միջև հաստատված երկարամյա բարեկամությանը: Առաջին անգամ բուլղարերենով լույս տեսած այս գիրքը մեծ հետաքրքրություն է առաջացրել հենց բուլղար հասարակության մեջ: Վ. Նիկոլյան, ով ուսումնասիրում էր Տրայանովի ստեղծագործական կյանքի մանրամասները, պատահմամբ գրող Վերա Բալաբանովայի արխիվում հանդիպում է Գ. Նժդեհի բաց նամակին՝ ուղղված բուլղար բանաստեղծին: Այդ օրվանից սկսվում է մեր հերոսի կյանքի և գործունեության մանրամասների ուսումնասիրությունը: Եվ գտնում է, որ նրա ողջ գործունեությունը հայրենասիրության վառ օրինակ է, որը զետեղված է նրա գրական ժառանգության մեջ: Նրա խոհափիլիսոփայական մտքերով սնվել է ոչ միայն հայրենիքի, այլև սփյուռքահայ երիտասարդությունը. «Ազգերի մէջ գուցէ և միայն դու իրաւունք չունիս ներքուստ պառակտուած լինելու», — ասում էր Գ. Նժդեհը:

Առաջին օրինակի վրա, բացի Վ. Բալաբանովայի մակագրությունից և ստորագրությունից, կան բուլղարահայ քույրեր՝ Մարիանա և Վարդանուշ Ղազարյանների ստորագրությունները՝ շնորհակալական երկտողով:

Գրքում տեղ է գտել նաև Թ. Տրայանովի և Վ. Բալաբանովայի նկարը՝ լուսանկարված Սոֆիայում, 1940 թ.: Բուլղարիայի դեսպանատան՝ ՀՀ կառավարությանն ուղարկված փաստաթղթերի մեջ կարևորում ենք Գ. Նժդեհի՝ Բալկանյան պատերազմների ժամանակ, որպես Մակեդոնա-օղրիյան աշխարհագրային գործերի 3-րդ բրիգադի Լոզենգրադյան 12-րդ դրոմիճնայի կազմում գործած հայկական վաշտի հրամանատարի գործունեությունը: Այդ պատերազմի ընթացքում Անդրանիկի և 3-րդ բրիգադի հրամանատար փոխգնդապետ Ալեքսանդր Պրոտոգերովի միջև բանակցությունների արդյունքում՝ համաձայնություն է ձեռք բերվում բրիգադի կազմում ստեղծել բացառապես հայերից կազմված կամավորական վաշտ՝ իր հրամանատարներով: Պրոտոգերովը Անդրանիկին խնդրել է գտնել մի երիտասարդ սպայի և նրան՝ որպես հրամանատարի, ներկայացնել բրիգադի ղեկավարության հաստատմանը: Անդրանիկը երաշխավորել է «Բուլղարիայում գտնվող, այդ երկրի պահեստի ենթասպանների դպրոցն ավարտած և նոր պողպորուչիկ կարգված 26 տարեկան Գարեգին Նժդեհին: Ուրիշ էլ ղվ, եթե ոչ այդ 2 խիզախ մարդիկ պետք է կանգնեին հայ կամավորական շարժման գլուխ» (Միմոնյան 2014, 124–125):

Կազմավորումից հետո հոկտեմբերի 16-ի հատուկ հրամանով վաշտն ընդգրկվում է Մակեդոնա-օղրիյան աշխարհագրի (հրամատար՝ գեներալ մայոր Գենով) կազմում փոխգնդապետ Ա. Պրոտոգերովի հրամանատարությամբ գործող 3-րդ բրիգադի «Լոզենգրադյան» անվանումով 12-րդ դրոմիճնայի (հրամանատար Կունն¹) կազմում: Դրոմիճնայի կազմում կար 29 վաշտ, որոնցից միայն մեկն էր հայկական: Վերջինս ուներ 230 կամավորական, իր վոյեվոդան (Անդրանիկ) և մեկ սպա-հրամանատար՝ Գ. Նժդեհ (Միմոնյան 2014, 129): Այս մասին կա վկայություն նաև Մեծ Տիոնովոյի ռազմապատմական արխիվում՝ (ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 6, թ. 24): Վաշտի դրոշը հայկական էր, ազգային:

Բարձր գնահատելով հայերի ծառայությունը բալկանյան պատերազմում թուրքերի դեմ, վկայում է բուլղարական կառավարության Սոֆիայի ռազմական նախարարության վկայականն՝ այն մասին, որ 1913 թ. նոյեմբերի 25-ին 2-րդ հայկական վաշտի հրամանատար պողպորուչիկ Գ. Նժդեհը պարգևատրվել է «խիզախության համար» 4-րդ աստիճանի սպայական խաչով (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9043, 23): Այդ մասին հաղորդում է նաև «Բուլղարսկի դոբրոլուցե» թերթը, նշելով որ Հայկական վաշտը իսկապես կոմել է առասպելական քաջությամբ:

Այս փաստաթղթերի մեջ հանդիպում ենք հազվադեպ լուսանկարներ, որտեղ Գ. Նժդեհը նկարված է Բալկանյան պատերազմի ժամանակաշրջանի զինվորական համազգեստով (1930 թ.), Գ. Նժդեհը Բազարչիկում՝ հարազատների հետ (1931 թ.): Լուսանկարել են Ղազարյան քույրերը, ինչի մասին պատմել է Հայկ Ասատրյանը (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9043, 23, 24):

1 Հրաչիկ Միմոնյանի մոտ Կունն է, բուլղարական փաստաթղթում՝ Կունն, կարծում եմ պետք է հիմք վերցնել Կունն տարբերակը:

Բալկանյան պատերազմի ժամանակ Գ. Նժդեհը հետևել է բուլղարական բանակի մի գեղեցիկ սովորությանը, այն է՝ «զինվորների անվանացուցակների ստուգման ժամանակ նախ հիշատակել իրենց երկրի ազատագրության ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նվիրական անունները, «ընկան»՝ պատասխանում է գորաշարքի աջ թևի 1-ին զինվորը: «Փառք»՝ կրկնում է աջ թևի երկրորդ զինվորը, «Հավերժ փառք»՝ ավելացնում է ամբողջ գորաշարքը (Նժդեհ 1993, 8):

Գ. Նժդեհը գտնում էր, որ ազգային նահատակների անունների ամենօրյա հիշատակումը բարձրացնում է զինվորների բարոյահայրենասիրական ոգին: Գ. Նժդեհը «դարձավ 20-րդ դարի հայոց ռազմարուեստի խոշորագույն տեսաբանը: Նա վերականգնեց, հարստացրեց ու կիրարկեց հայոց կորուստալ ու մոռացուած մարտաբառապաշարը...» (Գ. Նժդեհ 2002, 5): Այսօր էլ կիրառվում է նրա մարտաբառապաշարից մեր ազգային բանակում:

Գ. Նժդեհը Սոֆիայում իրեն հատուկ եռանդով լծվում է ազգային, հանրային և կուսակցական աշխատանքներին: «Տարիներով անդամ կ'ընտրուի Հ.Յ.Դ Պալքանեան կեդրոնական կոմիտեին, կը ստանձնէ ու կը վարէ պատասխանատու պաշտօններ... (Աւօ, 1968, 229): 1924 թ. հունիսին Սոֆիայի գերեզմանատանը բացվում է Հ.Յ.Դ. հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանի արձանը, որտեղ Գ. Նժդեհը հանդես է գալիս բոցաշունչ ճառով՝ նշելով, որ այդ համեստ մարդու մեջ կար աննկուն, հերոսական ոգի, որը բոցավառվեց ու համակեց իրեն և իր ընկերներին և նվիրվեց իր ժողովրդին ու ծառայեց նրան մինչ ի մահ:

1924–1925 թթ. Գ. Նժդեհը հողվածներ է տպագրել Պլովդիվում լույս տեսնող «Հայաստան» դաշնակցական թերթում: Այստեղ տպագրվել են առանձին գլուխներ նրա «Էջեր իմ օրագրեն»-ից, որը 1924 թ. լույս է տեսել Կահիրեում: Հետաքրքիր է մեծ Զորավարի մտքի գույները, նրա բնութագրումները զգաստության և խոհեմության կոչերը «Բաց նամակ հայ մտավորականության» շարքում, որը տպագրել է «Արաքս» թերթում՝ Սոֆիայում (նա համագործակցել է տպագրվել է 1926-ից):

Հավաքածուում առկա է 1932 թ. թվագրվող կարևոր մի վկայագիր, որով Բուլղարիայի Բորիս 3-րդ թագավորի կողմից Գ. Նժդեհին տրվել է Բուլղարիայի հպատակություն (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9050, 25): Այս փաստը ևս գնահատանքի վկայություն է Բուլղարիայում ունեցած նրա դերին և գործունեությանը:

Հետաքրքիր է ծանոթանալ հայի բնավորության գծերի մասին Գ. Նժդեհի գրած որոշ մտքերին: Մեր ժողովրդին բնորոշ դրական հատկանիշների կողքին պետք է տեսնել նաև թերին, բացասականը և աշխատել այդ ուղղությամբ: Հաճախ ենք լսում. «մեզ ինչ, թող հաղթի ով կուզէ, սա չէ՛ արդյոք հայ ժողովրդի որոշ խավերի օրվա հոգեվիճակը: Լուր ու լրագրով սնուող մարդիկ: Հանդիսատես լինելու մոլուխին և թեթև տպատրոթիւններ հաւաքելու ագահութիւն – ահա ընդհանրապէս մէկը մեր ժողովրդի հոգեբանական թերիւներից» («Ռազմիկ» 1940, թիւ 157):

Բուլղարիայում Գ. Նժդեհի բնակարանը բուլղարացի հացագործի խանութի մոտ էր: Մի օր գնում է նրա մոտ և պատվիրում, որ եթե հայ կանցնի այս փողոցով, կանգնեցրու և հարցրու դաշնակցականն ես, եթե սաի այո, թոյլ տուր, որ անցնի, եթե ոչ՝ թոյլ չտաս...: Ուղն ու ծուծը դաշնակցական գաղափարներով ապրող այս

մարդը կարող է դուրս գալ կուսակցության շարքերից, չհաշտվելով որոշ անձանց կուսակցամոլության հետ. «Կուսակցամոլութեան չար ոգին աստիճանաբար մթազնում է սրանց բանականութիւնը, կլանում խիղճը...Նա թշնամանք, ատելութիւն, անհամբերողութիւն է սերմանում միևնոյն ժողովրդին պատկանող անհատների և խմբակցութիւնների միջև» (Նժդեհ 2001, 42):

Հավաքածուն հարուստ է անձնական բնույթի նամակներով, հատկապես գրված բանտից, որոնք ավարտվում են հայրենիքի, Արարատի լեռան պատկերը չլքելու վեհ մտքերով. «Ամենայն բարիք քեզ և մյուսներին, ում բախտ է վիճակված ամեն օր տեսնել մեր Արարատը, որի տեսիլքը, ինձ չի լքում երբեք, որի վեհապանծ պատկերը ներհայեցորեն տեսնում եմ ամեն առավոտ և երեկո ինձ հանգիստ չի տալիս: Ինչպես կուզեի մեռնել Հայաստանում, հայացքս՝ Արարատին»: 1955թ. հունվարի 11-ին Ամալյային գրած նամակում գրում է. «Ինձ թույլատրել են գրագրություն հաստատել ընտանիքիս հետ, արդեն գրել եմ առաջին նամակը: Պատասխանին սպասում եմ այնպես, ինչպես դու սպասում ես քո հորեղբոր ազատ արձակմանը: Կուզենամ հետաքրքրվեք, եթե կան Բուլղարիայից հայրենադարձներ, տվեք իմ հասցեն, ինձ էլ այդ մասին տեղեկացրեք: Ընտանիքիս գրել եմ հին հասցեով առաջին նամակս, չիմանալով հիմա որտեղ են ապրում: Եթե ընտանիքս այլևս չի ապրում Սոֆիայում, դժվար թե նամակս հասնի նրանց: Մեկ անգամ ևս խնդրում եմ իմանալ հասցեն Եփիմեի և տեղեկացրեք ինձ (բնօրինակ, ուսերեն, թարգմ. Ս. Գ., ՀՊԹ, ՆԳՊՖ):

ՀՀ Կառավարության ներկայացրած փաստաթղթերում մեզ հետաքրքրեց Սոֆիայի «Տրիադիցա» (ՀՊԹ, ՆԳՊՖ 9051, 71–72) համայնքի ձեռնարկը, որը մշակվել է Վ. Նիկոլովայի կողմից: Այս ձեռնարկի ընթացքում վերաբժնորվել է Գ. Նժդեհ պետական-քաղաքական, հասարակական գործչի, «արյունով ու ջղերով» գործող փիլիսոփայի, ռազմահոգեբանի, ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական համակարգի ստեղծողի դերը: Կազմակերպվել են դասախոսությունների շարք «Արգելված և մոռացված» վերտառությամբ: Նպատակը մեկն էր՝ վերհիշել մոռացության ենթարկված գրողների, նկարիչների, լրագրողների, հասարակական-քաղաքական գործիչների անունները: Հայրենիքից դուրս մեր հերոսի միայն արտաքինն էր փոխված, զինվորական համազգեստի փոխարեն, քաղաքացիական հագուստ, իսկ ներքինը՝ գաղափարականը մնացել էր նույնը:

Բուլղարիայի «Երևույն» թերթի խմբագրությունը «Արգելված և մոռացված»-ի ցանկում ներառել էր նաև Գ. Նժդեհի անունը: Առաջին իսկ դասախոսությունը նվիրված էր բանաստեղծ Թ. Տրայանովին և Գ. Նժդեհին. Բանախոսը՝ «Տրիադիցա» համայնքի ատենապետ Ստոյան Կրոյչևը հակիրճ ներկայացրել է Թ. Տրայանովի զգալի ներդրումը բուլղարական գրականության մեջ և Գ. Նժդեհի՝ բոլշևիկների դեմ պայքարի մասին: Ներկաները մեծ հետաքրքրությամբ ծանոթացել են Գ. Նժդեհի հերոսական կյանքի դրվագներին և նրա ողբերգական վախճանին: Նա կմնա նույն ազգայնականը, նույն անզիջող պայքարողը, ի խնդիր հայության, հայկականության. «Ինչ որ հայկական է, վեր է ամեն ինչից», սա էր Գ. Նժդեհի նշանաբանը նաև օտար հողում: Հեռավոր Բուլղարիայում ևս նրա հոգին պայքարում էր, նրա մտահոգության հիմքում Հայաստանն ու հայն էր:

Դերասան Բոգդան Կիշևը, ով խոսել է Գ. Նժդեհի մասին, ընթերցել է 1941թ. հունվարի 21-ին Սոֆիայում նրա կողմից գրված նամակն՝ ուղղված բանաստեղծ Թ. Տրայանովին՝ այն որակելով ինքնաբուխ նամակ: Կարծում եմ՝ հետաքրքիր է մեջբերումներ անել նամակից, որտեղ Գ. Նժդեհը խոստովանում է, որ չնայած ծանոթ էր բուլղար ժողովրդի ցեղային կարողություններին, նրա պատմությանն ու շարժող ոգուն, նրա մշակութաստեղծ խանդավառությանը, սակայն երկտողով իրեն ուղարկված գիրքը եկավ ավելացնելու բուլղար «Ոգու» և «Հողի» մասին իր պատկերացումները: Հանճար և մարգարեականություն – ահա թե ինչերն են ծնունդ տվել Տրայանովի բալլադներին, «Ճշմարտօրէն մե՛ծ բանաստեղծ, որ դժբախտաբար, ամեն սերունդի օրով աշխարհ չի գալիս»: Հիշում է, որ Ֆրանսիայում մի ամսագիր Փարիզի անկման օրերին հարց է տվել, թե ո՞ր է մեծ բանաստեղծը, որ հանուն Ֆրանսիայի պաշտպանության կարողանար գորահավաքի ենթարկել բոլոր սրտերը: Ավելացնում է, որ գիրքը թերթելուց հետո հավատացած է, երբ բուլղար ժողովուրդը հարկադրված լինի մերկացնելու իր կատաղի սուրը, Բուլղարիայում ոչ ոք չպիտի կրկնի ֆրանսիացիների խոռվքի հարցը, քանզի ապրում է մեծ բանաստեղծը՝ Ոգու բանաստեղծը վկա՝ նրա բալլադները: Ապա շարունակում է. «Եթե ես լինեի վարիչը բուլղար բանակի, եկեղեցու, դպրոցի, պիտի հրամայեի, որ ամեն զօրական ու զինուոր, եկեղեցական ու հաւատացեալ, ուսուցիչ ու աշակերտ, որ ամեն բուլղար իր ծոցում կրէր ձեր բալլադաների գիրքը... միայն հանճարով ու մարգարէությամբ օծուն նման գրքերին է յաջողում ժողովրդից շանթանման առաջնորդներ ու մահապատրաստ վիտիագներ քանել: Ձեր բալլադների հզոր շունչը կարող է հոգեվերանորոգել Ձեր ժողովուրդը, զայն վերածելով մի հոգևոր մոնոլիտի... որովհետև գալիս են զօրաւոր ժամանակներ: Եղբայրօրեն՝ Զօր. ՆժԴԵՀ» (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9041, 5)

Բուլղարիայի տարիների լուսաբանման մասին մեկ անգամ ևս փաստում է Սոֆիայում 1996թ. Գ. Նժդեհի ծննդյան 110-ամյակին նվիրված Հայ դատի կազմակերպած միջոցառումը: Այն վկայում է Գ. Նժդեհ ռազմական, քաղաքական գաղափարական, հասարակական գործչի դերի և մեծության մասին: Միջոցառմանը մասնակցել են նաև մակեդոնական միության անդամները, ՀՕՄ-ի, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչները: Այստեղ Ալիս Կրընչարովան առաջարկել է հայերին՝ մարմարե հուշատախտակ դնել հայտնի հայ գործչի տան առջև, որտեղ նա ապրել է, աշխատել ու ձերբակալվել: Առաջարկը հետագայում իրականացվել է քաղաքապետարանի որոշմամբ ... որը կարծում եմ նորից փաստում է մեր հերոսի Բուլղարիայում հավուր պատշաճի ընդունված լինելու, հայ համայնքին անմնացորդ նվիրվելու մասին: Այդ է վկայում Սոֆիայից գրած տողերը՝ «Որտեղ և երբ էլ մեռնեմ, հաւատա՛ իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի և օգնութեան պիտի փութայ իր հայրենի աշխարհին և աներևութաբար քո բանակները առաջնորդէ: Զինուոր գավակդ՝ Նժդեհ, 1937թ., Սոֆիա» («Նախիջևան» 2000, թիւ15) :

Ներկաները պատմել են հուշեր Գ. Նժդեհի հետ հանդիպումների մասին, նրա մարդ կերպարի՝ որպես բարոյականի իդեալ, ընդգծելով Նժդեհի նշանակա-

լից, հայրենապաշտպան դերը բուրդարահայ համայնքի կյանքում: Նրա խոսքի մեջ վեհ էր ամեն ինչ և նույնը պատգամում էր՝ «Սիրիր վեհը, գեղեցիկը և հերոսակա- նը նոյնիսկ թշնամիներիդ մեջ»:

Շատ գրավիչ ու տպավորիչ է եղել Սոֆիայի համալսարանի լեզվաբանու- թյան բաժնի դասախոս դոկտոր տիկին Նիկոլովայի խոսքը, որն ավարտվել է հե- տևյալ մտքով՝ «Թող մեզմե ամեն մեկը իր հոգվու մեջ մոմ մը վառե Գ. Նժդեհի փայլուն հիշատակին առջև և թող երբեք չմոռնա անոր հերոսական օրինակը» («Երևան» 1996, N 6)–Գ. Նժդեհի պատգամն էր «Երբեք և ոչ մի տեղ՝ առանց հո- գևոր հայրենիքի»:

Միջոցառմանը մասնակցած հյուրերի մեջ էր նաև հոր կորուստը վերապրած գավակը՝ Նժդեհի որդին՝ Վրեժ Սուքիասը, ում մասին կան որոշ վկայություններ ՀՊԹ-ում պահվող հավաքածուի մեջ: Դա նրա ծննդյան և մկրտության վկայա- կանն է՝ Սուքիաս Վրեժը՝ ծնված 1936 թ. Սոֆիայում, մկրտված՝ 1937 թ. (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9042, 12): Կարծում եմ՝ այս փաստաթուղթը վերջ կդնի որդու հետ կապված այլ «ասեկոսների»:

1994 թ. Վազգեն Տեր-Հարությունյանը այցելել է Բուրդարիա, մանրամասներ է հաղորդել և տեսակցել իր ազգականի՝ Սուքիաս-Վրեժի հետ, ով շատ դժվարու- թյամբ է հաղորդակցվել, ներսում պահելով վիրավորանքն ու հերոս հոր կորստի դառը վիշտը, այն գրկանքները, որ կրել են ինքն ու մայրը հոր ձերբակալությունից հետո: Ականատես է եղել հոր ձերբակալմանը. դաժան ժամանակները, տասնա- մյակների կաշկանդվածությունը, իրենց դրոշմն էին թողել Սուքիաս-Վրեժ Նժդե- հի բնավորության վրա: Տարրական մարդկային իրավունքներից գրկվելը, երի- տասարդի երազանքների փշրվելը... և այդ բոլորը՝ որովհետև Գ. Նժդեհի որդին էր (Պատմում է Վ. Տեր-Հարությունյանը, այդ մասին գրել է նաև Կարո Հայրապե- տյանը իր «Անձնվեր ազատամարտիկը» հոդվածում): Վրեժին և մորը տեղափո- խել են Սոֆիայից Պավլիկենե: Աշխատել է գործարանում, այս մասին հանդիպում ենք Նժդեհի՝ բանտից՝ Ամալյային ուղարկված, 1955 թ. դեկտեմբերի նամակում, գրում է, որ առաջին նամակն է ստացել իր ընտանիքից, գրել են Պավլիկենեից «... Նյութական վիճակը այնքան էլ բարվոք չէ, Վրեժիկը աշխատում է մի գործարա- նում, Եփիմեի առողջականը տկար է, ահա ողջ նամակի բովանդակությունը, որը ավելի շատ տխրեցրեց, քան ուրախացրեց ինձ: Երևում է տղայիս կարիքն է ստի- պել աշխատել, երբ փխրուն դեռահասին դեռ պետք էր սովորել: Ճակատագիր է...» (ՀՊԹ, ՆԳՊՖ, ի պահ, 1996): Այդ տխուր ճակատագիրը դրոշմված էր տղայի աչ- քերի մեջ, դեմքի վրա: Ապրել է մեկ սենյականոց համեստ բնակարանում: Մահն էլ վրա է հասել կարիքի ու խեղճության մեջ՝ ներքուստ հպարտ կրելով, իր՝ ժո- դովրդին անգնահատելի ծառայություններ մատուցած, հերոս հոր կերպարը:

Սոֆիայից 1934 թ. նոյեմբերի 25-ին գրված նամակում, Գ. Նժդեհը պատմում է իր և Հայաստանի Առաջին Հանրապետության երրորդ վարչապետ Հանո Օհան- ջանյանի հանդիպման մասին, այն, որ մասնագիտությամբ բժիշկ Հ. Օհանջանյա- նը, անհանգստացած մեր հերոսի առողջական վիճակով, գննել է և փաստել, որ լյարդը լքջորեն վնասված է, իսկ սրտի մկանները տկարացել են:

Ազգային հերոսին հանգիստ չէին տալիս թուրք-բուլղարիկները, որոնք ամեն

քայլափոխի հետևում էին Գ. Նժդեհին: «Տելի Օրման» (Լյուդոգորիե) բուլղարական թերթի (թուրքերենով նշանակում է «Գիժ անտառ») արձագանքները երևում է «Նովոյե Վրենյե» պարբերականում, որը գրում է «Հայ յեղափոխական գործարար, յատուկ առաքելութեամբ գաւառները կը շրջի ևս հայութեան յեղափոխական տարրը կը նախապատրաստէ անմիջական ևս ուղղակի գործողութեան, Թուրքիոյ դէմ»:

Թշնամանքի պատճառը անցյալը չէր, այլ ներկան և ապագան: Հետո Պոլսոյ թերթերը գրել են, թե «Պատերազմի ատեն հայերը պուլկար դրոշին տակ պիտի ծառայէն» (Աւօ 1968, 262): Այս միտքը հանգիստ չէր տալիս նրանց: Հասկապես՝ երբ ականատես են լինում Գ. Նժդեհի կազմակերպած ցույցին՝ 1935 թ. օգոստոս 18-ին, որի մասնակիցները և հայեր և բուլղարացիներ էին: Այս երկու ժողովուրդների եղբայրական ուխտը արձագանք է գտել նաև Բուլղարիայի մամուլում: Զորավարը կարողացել էր հարաբերություններ հաստատել բուլղարացի բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականների հետ, ովքեր նրան հրավիրում էին հորելյանական օրերին, զինվորական հավաքների ժամանակ:

Գ. Նժդեհը մեծ հարգանք է վայելել իր հասարակական գործունեության մեջ: «1932-ին կը մասնակցի Հ.Յ.Դաշնակցության ԺԲ Ընդհանուր ժողովին, որ կը գումարուի Փարիզի մէջ, այս ժողովին կողմէ, որպէս գործիչ կը հրաւիրուի Մ. Նահանգներ, ուր կը մնայ 2 տարի ունենալով բազմարդին ու բեղուն գործունեութիւն, դառնալով ամերիկահայ ազգային կեանքի առանցքը գրեթէ» (Աւօ 1968, 235):

Ասինար է չհիշատակել նաև Նժդեհի գործունեությունը Ամերիկայում «Արդարև Զոր. Նժդեհ մեծ երախտիք ունի նաև ամերիկահայութեան կազմակերպման ու ազգապահպանման ճիգերուն մէջ. Իբրև Հ.Յ.Դաշնակցութեան գործիչ, 1933–1934 թթ. մագնիսացուց ամերիկահայ զանգուածները, անխտիր՝ դաշնակցական, չէզոք և նոյնիսկ ռամկավար: Ան էր, որ հիմը դրաւ մեր ցեղակրօս ուխտերուն: Ան էր ոգին Հայ երիտասարդ դաշնակցութեան, որ ցարդ կը գործէ, անոր ճատերը կու գային լսելու նոյնիսկ հայերէն չգիտցողները, այնքան որ հմայիչ էին ու կախարդիչ» (Աւօ 1968, 240–241): Նյու Յորքում, Բոստոնում, Պրովիդանսում, Մենտ Լուիզում, Լոս Անջելեսում, Տորոնտոյում, Սան ֆրանցիսկոյում տպագրված ամերիկյան մամուլի էջերում հանդիպում ենք Գ. Նժդեհի հակահամայնավար և հակաթուրքական գործունեության մասին: Նա դատապարտել է Ամերիկայում համայնավարական քարոզչությունը՝ «Բոլշևիզմը ոչ թե դեմոկրատիա է, այլ դեմոնոկրատիա» վերնագրով:

Անագատության մեջ՝ բանտից ուղարկված նամակներում պարզ երևում է նրա ներքին պայքարը: Որպես զինվորական և մտածող, հրամանատար ու քաղաքական գործիչ, գրող ու փիլիսոփա՝ մեր հերոսը չէր դադարում պայքարել թե՛ արտաքին աշխարհի, և թե՛ ինքն իր հետ: Առաջին 3 նամակները ուղարկված են բանտից 1944 թ. աշնանը, որտեղ Եփիմեից խնդրում է տաք գուլպաներ, ներքնագգեստ և կենցաղային մի քանի իրեր: Ավելի ուշ՝ 1955 թ. մարտի 21-ին եղբորը գրած նամակում հայտնում է, որ բժիշկները հաստատել են այն հիմքը, որը լիովին համապատասխանում է ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարի ընդունած հրամանագրին, որով նա կարող է ժամկետից շուտ ազատվել: Խորհուրդ է տալիս այդ հիմնավոր-

մամբ դիմել Գերագույն դատարան, Գերագույն խորհուրդ և այլ համապատասխան տեղեր: Գրում է, որ կարող են տեսակցություն կազմակերպել, որը կախված է բանտային գլխավոր վարչության թույլտվությունից: Խնդրում է գրել հին հասցեով նամակներ, այն էլ հաճախ, սակայն ծանրոց չուղարկել (ՀՊԹ, ՆԳՊՖ, Նժդեհի անձնական նյութեր, ի պահ ուսերեն, թարգմ. Ս.Գ.)

Նույն օրը գրած հաջորդ նամակում, դիմելով իր հարազատներին գրում է, որ նրանց խորհուրդը իր ձեռագրերի հարցով դիմել Հայաստանի գրողների միությանը, կփորձի իրականացնել, երբ իրեն կտեղափոխեն: «Քանի որ ինձ ժամանակ է հարկավոր ձեռագրերս կարգավորելու, քանի որ թեմաները բազմազան են և հարուստ՝ մտորումներ պատմության և փիլիսոփայության մասին, գրականության, ժողովրդի, առաջնորդների, մարդու և մարդու իրավունքների, զինվորների և հրամանատարների, օրենքի խոսքի, հայրենասիրության, գրական քննադատության, հավերժի և անցողիկի, Հայաստանի և հայերի մասին: Դրան զուգահեռ ես ունեմ ինքնակենսագրություն՝ «Երկխոսություն Մասիսի և իմ միջև» (ՀՊԹ, ՆԳՊՖ, Գ. Նժդեհի անձնական արխիվ, ի պահ): Այս երկխոսությունը շարունակվեց մինչ իր մահը:

Արտակ Վարդանյանը (1996–1998 թթ եղել է «Նախիջևան» հայրենակցական միության նախագահը) մեզ ներկայացրեց՝ Պետական անվտանգության կոմիտեի պաշտոնաթող գնդապետ Վաչե Հովսեփյանի կողմից ՊԱԿ-ի արխիվում գտած փաստաթուղթը, ինչը Գ. Նժդեհի հետ նույն բանտախցում Կուզմենկո ազգանունով բանտարկյալի բանաստեղծությունն էր: Նրա աչքի առջև է կատարվել այս ամենը. «Տեսա մի բուռ հող՝ թաքցրած ալեհեր բանտարկյալի մոտ. իր բանտախուցն էր նա բերել Հայրենի երկրից մի բեկոր, պահում էր որպես բալասան ել հաճախ խոնարհվում նրան – Անթռսը ձեզ կնախանձեր, ասացի մի անգամ նրան: Շատ եմ մաքառել սիրելիս, պայքարել 40 տարի, և ահա այսքանն է, — ասաց, — իմ բաժին հողը հայրենի: Տխուր ու դաժան պատերով բանտային մեր խուցը մի օր խուզարկու զինվորներ մտան և հողն այդ խլեցին մի բուռ: Տեսա արցունքները նրա՝ մանկան պես արտասվող ծերունու. ինչ ասել է հող հայրենի, որին կապվել ես ողջ կյանքով: 1951թ սեպտեմբեր, Վլադիմիր»: Այստեղ կարծում եմ մեկնաբանություններն ավելորդ են...

Հավաքածուի մեջ կա հետաքրքիր բովանդակությամբ մի նամակ՝ գրված եղբորը, որտեղ կա և՛ վիրավորանք, և՛ վեհություն, և՛ կարոտ, և՛ խղճահարություն՝ միախառնված իր կերպարի մեջ. «Ես տանյակ տարիներ ապրել եմ առանց գրոջի, ես սովորել եմ ապրել այդպես, և այնքան խանդավառված եմ, որ պատրաստ եմ ինչպես Բուդդա, ինձ գոհաբերել հանուն սոված էգ առյուծի: Ես կարիք չունեմ Լիլիայի (Լիլյա Դադայան, առաջին կնոջ՝ Գոհար Դադայանի աղջիկը, ում Նժդեհը չի տեսել) օգնությանը, բայց եթե նա չունի գոնե տարրական էթիկա (հետաքրքրվել հայրենասեր հոր ողբերգական ճակատագրով), Աստված իր հետ, ամեն մեկին տրված չէ այրվել վեհ զգացումներով: Ես նրան էլ երբեք չեմ գրի: Գրել եմ Օլյային՝ քո տված հասցեով, չի պատասխանել, երևի նամակս տեղ չի հասել: Վրեժի հանդեպ քո եղբայրական զգացումքների համար շնորհակալ եմ: Խեղճ տղաս, նա արժանի է դրան: Նա որբացավ շատ ավելի վաղ: Իսկ իմ զառամյալ աղավալյակս՝ Եփիմեն: Խղճուկ վիճակու՛մ եմ: Ես լուսանկարներ չունեմ և հնարա-

վոր չէ լուսանկարվել: Ինձ մոտ կար Վրեժի, Եփիմեի և իմ նկարները, բայց հիմա նրանք Հայկական ԽՍՀ-ի ՆԳՆ-ում են: Ձեզ եմ ուղարկում հրաշքով փրկված Վրեժի փոքրիկ լուսանկարը, որը գտել եմ Լեոյի «Հայոց պատմություն» ստվարածավալ գրքի մեջ: Այն կարելի է մեծացնել: Դե ցտեսություն, համբուրում եմ բոլորիդ, Ձեր Գարեգին: 9.05.55թ.» (ՀՊԹ, ՆԳՊՖ, 9054, 74):

Թանգարանին ի պահ տրված Գ. Նժդեհի հավաքածուի մեջ կարևորում ենք Գ. Նժդեհի քրեական գործը կարճելու, արդարացման մասին փաստաթուղթը, որին նա սպասում էր դեռ կենդանության օրոք, այն կարծում ենք ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ. Այս փաստաթուղթը տրվել է շատ զգուշորեն, ակնածանքով, ըստ Վազգենի՝ ՀՊԹ-ն առաջինն էր, որ ցուցադրել է այն: Զորավարն իր կենդանության օրոք էր սպասում այս փաստաթղթին, դա երևում է 1955 թ. դեկտեմբերի 2-ին եղբոր աղջկան՝ Ամալյային գրած նրա նամակից.

«Ստացել եմ նամակդ թվագրված 18.11.55թ.

...Իմ գործերի մասին, ոչինչ որոշակի ասել չեմ կարող: Դեռ 2 ամիս առաջ ՆԳՆ-ն ինձ տեղյակ պահեց, որ գործս վերանայվում է: Ձեմ ընկալում, ինչու են ուզում, որ ես մեռնեմ բանտում: Իմ ընդհանուր վիճակը օրեցօր վատանում է: Երեկվանից գտնվում եմ հիվանդանոցում:

Բարևներ Թափառականից Օլյային, Գագիկին, համբուրում եմ քո հորեղբայր՝ Գարեգին» (ՀՊԹ, Նժդեհի նյութերը):

Արդարացման-ռեաբիլիտացիայի փաստաթուղթը մեջբերում ենք առանց կրճատման.

«Հաստատում եմ»

Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազ
արդարության երկրորդ դասի պետական խորհրդական Ա. Ա. Գևորգյան
Որոշում

Քրեական գործը կարճելու մասին: 1992թ. 30 մարտի

Գարեգին, նույնը Նժդեհ Եղիշի Տեր-Հարությունյանը ծնվել է 1886 թ. հունվարի 1-ին Երևանի նահանգի Նախիջևանի Կզնութ գյուղում, բարձրագույն կրթությամբ, կրել է գեներալի զինվորական կոչում, մասնագիտությամբ՝ լրագրող: 1944թ. նոյեմբերի 1-ին կալանավորվել է մեղադրվելով այն բանում, որ 1908թ. հանդիսացել է «Դաշնակցությունե կուսակցության անդամ: 1919թ. օգոստոսից դաշնակցական կառավարության կողմից գործողվել է Զանգեզուր ազգային բանակ ստեղծելու՝ բոլշևիկների դեմ կռվելու համար, հանդիսանալով Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար, 1921թ. ակտիվ պայքար է մղել կոմունիստների դեմ: Փետրվարյան ապստամբությունը ճնշվելուց հետո 1921թ. հուլիս ամսին Գ. Տեր-Հարությունյանը մեկնել է Իրան, իսկ 1922թ. բնակություն է հաստատել Բուլղարիայում: Գ. Տեր-Հարությունյանը մինչև 1937 ղեկավարել է Բուլղարիայի դաշնակցական կուսակցության կազմակերպությունը, ակտիվ գաղափարական պայքար է տարել խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ: 1932-33թթ. կազմակերպել է դաշնակցական երիտասարդական «Ցեղակրոն» կազմակերպություններ, որոնց գործունեության հիմքն է հանդիսացել ազգային անվտանգության գաղափարների տարածումը: 1943–1944թթ. Գերմանիայում

գրադվել է հայ երիտասարդների հավաքագրումով և նրանց Բուլղարիայից ուղարկել է Բեռլին, որտեղ նրանք ավարտել են հետախուզության դպրոցը: Գերմանիայի կողմից գրաված տերիտորիայում կազմակերպել է հայագգի քաղաքացիներին և պայքարի է կոչել ընդդեմ խորհրդային իշխանությանը՝ Հայաստանում անկախ պետություն ստեղծելու նպատակով:

....1948թ. ապրիլի 24-ի որոշումով Գարեգին, նույնը Նժդեհ Տեր-Հարությունյանին դատապարտել է 25 տարվա ազատազրկման: Տեր-Հարությունյանը պատիժը կրել է Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի մեկուսարանում, որտեղ և մահացել է 1955թ դեկտեմբերի 21-ին:

Առաջադրված մեղադրանքում Գարեգին, նույն Նժդեհ, Եղիշի Տեր-Հարությունյանը իրեն մեղավոր չի ճանաչել, նշելով, որ ինքը հանցանք չի կատարել, իր ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրմանը: Զանգեզուրում իր ղեկավարությամբ մարտերը նա համարել է ազգային ազատագրական, ի շահ Հայաստանի անկախ Հանրապետության: Արտասահմանյան երկրներում իր ստեղծած կազմակերպությունների նպատակն է եղել Թուրքիայի և խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից զավթած Հայաստանի տերիտորիաների ազատագրումը և նրա միացումը Հայաստանի անկախ պետությանը: Բեռլինում 1943–1944թթ. իր գործունեության նպատակն է եղել «Հայկական լեգիոններ» ստեղծելը և հայ գերիներին ոչնչացումից փրկելը:

Գտնում եմ, որ Գարեգին, նույնը Նժդեհ, Եղիշի Տեր-Հարությունյանը դատապարտվել է անհիմա: Նա իր գործունեության ընթացքում պայքարել է բռնակալության դեմ, անկախ Հայաստանի իշխանության անվտանգությունը ապահովելու, հայ ժողովրդի իղձերը իրականացնելու համար: Նրան վերագրված մեղադրանքը իր մեջ հանցագործության հատկանիշներ չի պարունակում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 5 հոդ. 2-րդ մասով

ՈՐՈՇԵՑԻ

Գարեգին, նույնը Նժդեհ, Եղիշի Տեր-Հարությունյանի նկատմամբ քրեական գործը կարճել հանցակազմի բացակայությամբ, նրան համարել արդարացված-ռեաբիլիտացված:

Ազգային անվտանգության մարմիններում քննության վրա
հսկող բաժնի դատախազ արդարադատության
ավագ խորհրդական – Ս. Հակոբյան (ստորագրություն)
«Համաձայն եմ»

ՀՀ դատախազության Ազգային անվտանգության մարմիններում
քննության վրա հսկող բաժնի պետի պաշտոնակատար,
արդարադատության խորհրդական
Պ. Թովսյան (ստորագրություն)» (ՀՊԹ, ՆԳՊՖ, ի պահ):

Կարծում ենք ՀՊԹ-ում պահվող Գ. Նժդեհի հավաքածուն օգնեց անդրադարձ կատարել մեր Զորավարի կյանքի և գործունեության որոշ դրվագներին և կարևորեց ու նորովի մեկնաբանեց նրա գործունեության ժամանակահատված, որ քիչ էր լուսաբանված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՉԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

ՀՊԹ, ՆԳՊՖ, ՆԺԴԵՀԻ ՆՅՈՒԹԵՐ (Ի ՊԱՀ)–Հայաստանի պատմության թանգարան (ՀՊԹ), նորագույն պատմության ֆոնդ (ՆԳՊՖ), Նժդեհ Գ. անձնական նյութեր, (ի պահ) Հրանդիս ալբոմում, Անձնավկայություն, Վլադիմիր, 1955:

ՀՊԹ, ՆԳՊՖ, 9039-9054-2009թ. Բուլղարիայում ՀՀ դեսպանատան միջոցով ՀՀ կառավարությանն ուղարկված փաստաթղթերը Բուլղարիայում Գ. Նժդեհի Բուլղարիայում գործունեության մասին:

Պարբերական մամուլ

«ՌԱԶՄԻԿ» 1940–«Ռազմիկ» թերթ, Սոֆիա, 4 մայիսի 1940, թիւ 157:

«Երևան» 1996–«Երևան» թերթ, Սոֆիա, 8 փետրվարի 1996, N 6:

«ՆԱԽԻՋԵԻՄՆ» 2000–«Նախիջևան» պարբերաթերթ, Սոֆիա, 2000, թիւ 15:

Գրականություն

ԱԻՕ 1968–Ա10, Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ. վկայություններ, Պեյրույ, 1968:

ՆԺԴԵՀ 2001–Նժդեհ Գ, Հատընտիր, Խմբ. խորհուրդ Լալայան Մ., Եազըճեան Գ. Յարությունեան Ա., Երևան, 2001:

ՏԵՐ–ՀԱՐՈՒԻԹՅՈՒՆՅԱՆ Վ., Տեր–Հարությունյան Վ., քանավոր պատմություններ, Թումանյան 16 հասցեի իր բնակարանում, Երևան, 1996:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2001–Վարդանյան Ա., Նժդեհյան մասունքներ, Երևան, 2001:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ 2003–Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Երևան, 2003:

ԼԱԼԱՅԱՆ 1995–Լալայան Մ. Գարեգին Նժդեհ, Երևան, 1995:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ 2001–Համբարձումեան Ռ., Վարք Նժդեհի Ասոյթներ, Երևան, 2001:

ՍԻՍՈՆՅԱՆ 2014–Սիմոնյան Հ., 1912–1913թթ. Բալկանյան պատերազմները և հայերը, Երևան, 2014:

ՆԺԴԵՀ 1993–Նժդեհ Գ., Զորաշարքային կանոնադրություն, Երևան, 1993:

ՆԺԴԵՀ 2002–Նժդեհ Գ, Ասոյթներ, Նախիջևան հրատարակչություն, Երևան, 2002:

Seda Galstyan

History Museum of Armenia

sedagalstyan@yahoo.com

COLLECTION OF GAREGIN NZHDEH KEPT IN THE HISTORY MUSEUM OF ARMENIA

Keywords: Museum collection, G.Nzhdeh, prison in Vladimir, letters, Bulgari, Balkan War, Vidka Nikolova.

The name of the great son of the Armenian people, Garegin Nzhdeh, is associated with heroic and tragic pages, connected together, a fair assessment of which can only be given by history, giving a worthy place among universal values.

The collection kept in the History Museum of Armenia (HMA) partially contains the coverage of these pages. For the first time in 1996, HMA acquired the last religions of the

great hero left in the Vladimir prison with the grandson of Nzhdeh's brother, Vazgen Ter-Harutyunyan, which are now stored in the museum.

We received the second collection from the RA government. This collection was sent from Bulgaria, from where the consul in Sofia Artur Madoyan handed over the collected materials about Nzhdeh to the RA government. This collection contains about 73 documents and rare photographs.

It is no secret that today more is said and written about G.Nzhdeh (Garegin Ter-Harutyunyan) as a military and political figure with Armenian origins, the organizer of the self-defense of Zangezour and Gokhtan, the leader of Lernaayastan, but few information was kept about the further stage his life and biography, especially about the years he spent in Bulgaria and his activities during these years.

The study of materials, especially the long-term correspondence between poets, writers, public and political figures in Bulgaria and G.Nzhdeh, Nzhdeh's letters, notes, memoirs, photographs, Nzhde's publicist works in the "Razmik", "Araks", "Yerevan" periodicals give us an opportunity to present in a new way the unknown pages of the activity of the statesman-political figure, writer and philosopher G.Nzhdeh.

Седа Галстян
Музей истории Армении
sedagalstyan@yahoo.com

КОЛЛЕКЦИЯ ГАРЕГИНА НЖДЕ ХРАНИВШИЙСЯ В МУЗЕЕ ИСТОРИИ АРМЕНИИ

Ключевые слова: Коллекция музея, Г.Нжде, Владимирская тюрьма, письма, Болгария, Балканская война, Видка Николова.

С именем великого сына армянского народа Гарегина Нжде связаны героические и трагические страницы, сплетённые воедино, справедливая оценка которого может дать только история, уделив достойное место в ряду общечеловеческих величин.

Коллекция, хранящаяся в музее истории Армении (МИА) частично содержит освещение именно этих страниц. Впервые МИА преобрёл в 1996 г. последние реликвии великого героя оставленные во владимирской тюрьме у внука брата Нжде – Вазгена Тер-Арутюняна, которые сейчас хранятся в музее.

Вторую коллекцию мы получили от правительства РА. Эта коллекция была прислана из Болгарии, откуда консул в Софии Аргур Мадоян собранные материалы о Нжде передал правительству РА. Эта коллекция содержит около 73 документов и редкие фотографии.

Не секрет, что сегодня больше говорится и пишется о Г.Нжде (Гарегин Тер-Арутюнян) как о военном и политическом деятеле армянского происхождения, организаторе самообороны Зангезура и Гохтана, руководителе Лернааыастана, однако мало хранилось информация о дальнейшей стадии его жизни и биографии, особенно о годах проведённых в Болгарии и деятельности за эти годы.

Исследование материалов, особенно многолетняя переписка между поэтами, писателями, общественными и политическими деятелями Болгарии и Г.Нжде, письма Нжде, заметки, мемуары, фотографии, публицистические труды Нжде в периодиках «Размик», «Аракс», «Ереван» дают нам возможность по-новому представить мало освещённые страницы деятельности государственного-политического деятеля, писателя и философа Г.Нжде.